

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԻ  
21.04.2012 Թ. «ՕՐԵՆՔ Է ԽԱԽՏՈՒՄ»  
ՀՈԴՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հոդվածում նշված է, որ թիվ 17 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված ՀԱԿ անդամ Գագիկ Ներսիսյանի լիազոր ներկայացուցիչները բողոք են ներկայացրել ընտրատարածքային ընտրական հանձնաժողով այն մասին, որ «ՀՀԿ-ական թեկնածու Կարինե Պողոսյանն Արտաշատ քաղաքի ողջ շենքերի վրա, սննդամթերքների օբյեկտներին անթիվ-անհամար ընտրական պաստառներ է փակցրել...»:

Տեղեկացնում ենք, որ հոդվածում նշված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, և 21.04.2012 թվականի դրությամբ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով վերոհիշյալ բովանդակությամբ որևէ դիմում (բողոք) չի ներկայացվել:

Հոդվածում նշված փաստերի հավաստիության ստուգման նպատակով 21.04.2012թ. թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները շրջայց են կազմակերպել, որի արդյունքում պարզվել է, որ արգելված վայրերում պաստառներ փակցնելու վերաբերյալ տեղեկությունները հնարածին են և չեն համապատասխանում իրականությանը: